

„КАВКАЗСКИЙ КАЛЕНДАРЬ“ на 1893 годъ. Изданъ по распоряженію Главноначальствующаго гражданскою частью на Кавказѣ, при Закавказскомъ статистическомъ комитетѣ, подъ редакціею Члена того же комитета статскаго совѣтника Е. Кондратенко. XLVIII годъ. Тип. литъ, тип. Канц. Главнач. гражд. ч. на Кавказѣ, Груз. Изд. Товор., Либермана и Козловскаго, 1892 г. (Կովկասեան Օրացույց 1893 թ. համարի Հրատարակած է կարգադրութեամբ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի, Սնդրկովկասեան վիճակագրական կոմիտեի ձեռքով, խմբագրութեամբ նոյն կոմիտեի անդամ Ե. Կոնդրատենկոյի 48-րդ տարի թիֆլիս, 1892 թ.): 200+182+62+88 է, Կովկասի քարտէզով: Գինն է առանց կազմի 1 ռ. 50 կ. շքեղ կազմով 2 ռ. 25 կոպէկ:

Կովկասեան կառավարութեան հրատարակութիւններից «Կովկասեան Օրացույց» կոչւած արժանի է որ ընթերցող հասարակութեան ընդհանրութեանը ծանօթ լինի: Դա մի պարբերական հրատարակութիւն է, որ լուս է տեսնում տարին մի անգամ, մօտաւորապէս «Մուրճ»-ի ֆորմատով և մի հաստ գրքի ծաւալով: Նա բովանդակում է ուղղափառ, հաշվաւորական, հաշվաթողական, հաշվաւորական, հաշվաթողական, մահմեդական և հրէական օրացույցներից դուրս՝ բազմակողմանի ալ նիւթեր, վերաբերեալ Կովկասեան երկրի կառավարութեան, աղգաբնակութեան, տնտեսութեան և այլն:

«Կովկասեան Օրացույցի» սկզբնաւորութիւնը պատկանում է Կովկասեան նախկին փոխարքայ իշխան Միխայէլ Վորոնցովի նախածնունդութեանը, ինչպէս և ռուսաց պաշտօնական «կապազ» լրագրի հիմնադրութիւնը. և այդ երկու հրատարա-

կութիւններն էլ սկսեցին միևնույն տարում, ալն է 1846 թւականին:

Ներկայ հատորի նիւթերի ցանկը բռնում է տպւած ամբողջ հինգ էջ, որոնց կարելի է բովանդակել հետեւեալ ձևով.

1. Օրացույցներ լուծադատանների, հաշվաւորականների, հաշվաւորականների, հաշվաթողականների, հրամայական-կաթողիկներին, մահմեդականների և հրէանների, և տօնացույցներ:

2. Օգաբանական տեղեկութիւններ Կովկասի մասին:

3. Կլիմայական տեղեկութիւններ Կովկասի մի քանի կէտերի մասին:

4. Կովկասի ճանապարհների ուղեցույցներ:

5. Փոստալին շարժում:

6. Շոգեհաւաքին հաղորդակցութիւն:

7. Ռուսաստանի և Կովկասի քաղաքների և գլխաւոր գիւղերի ցանկ:

8. Չափեր, կշիռներ, դրամներ

Ռուսաստանում, Կովկասում առանձնապէս, Պարսկաստանում և Թիւրքիայում:

9. Գրագաւոր թղթերի զինը, ժառանգութեան հարկ, որսի կանոններ:

10. Ռուսաց օրինագրքերի ցուցակը, պարբերական հրատարակութիւնները Կովկասում:

11. Կառավարչական բաժանմունքը Կովկասում:

12. Վիճակագրական և ալ տեղեկութիւններ Կովկասի մասին՝ տարածութիւն, ազգաբնակչութիւն, հրդէներ, եկեղեցիներ, վանքեր, հանքեր և անտառներ, ռուսաց դըպրոցներ, անասուններ, ոճրագործութիւն, հունձ, գոթարաններ, Տեսութիւն տնտեսական դրութեան ըստ նահանգներու Կովկասի հանքատեղերը, երկաթուղակն հաղորդակցութեան մասին թւեր:

13. Գրքերի հրատարակութիւնը Կովկասում 1891 և 1892 թ. և պարբերական հրատարակութիւնները:

14. Պետական հիմնարկութիւնների հրատարակութիւնները 1891 և 1892 թւակ. և նոցա մէջ լոյս տեսած զլիսաւոր լօգաձների ցանկը:

15. Նիւթերի ցանկ Կաւկազ լրագրի 1846—51 թ. և Կովկասեան օրացոյցի 1846—68 թ.:

16. Աշխարհագրական ընկերութեան հրատարակութեան մէջ տպած լօգաձների ցանկը մինչ 1892 թ.

17. Կապերութեան բարձրագոյն ատեանների ծառայողների ցանկը:

18. Կովկասեան կառավարութեան բոլոր ատեանները և ծառայողների ցանկը:

Մինիստրական հիմնարկութիւնները Կովկասում:

Նահանգական, գաւառական և քաղաքակն հիմնարկութիւնները իրանց ծառայողներով:

Բժշկական կառավարչութիւն:

Դատարանական հիմնարկութիւնները Կովկասում:

Կովկասեան (ռուսաց) ուսումնարանական կառավարութիւն՝ ուղղափառ, հաւ-լուսաւորչական, հոռմական կաթոլիկական, ավետարանական, մահմեդական:

Ձինւորական կառավարութիւն:

Մի կողմ թողնելով հատորի ալն մասերը, որոնք պարունակում են կրօնական օրացուցները մէկ կողմից և ատեանների ու ծառայողների ցուցակները միւս կողմից, աշխատենք դրքի մէջ ամփոփած բազմաթիւ նիւթերից քաղել ամենամիօփ տեղեկութիւնները, որոնք ռուսմասիրական կարեւորութիւն են ներկայացնում և կամ զոնէ նոցա վերալ ընթերցողների ուշքը դարձնել:

Օղ ա բ ա ն ա կ ա ն ՝ Օղաբանական դիտողութիւնների համար, որ պէս լստնի է, գոլութիւն ունի Թիֆլիսում «Գլխաւոր Ֆիզիկական Գիտարան (Главная Физическая Обсерватория)», որը իւր արած դիտողութիւնները հրատարակում է իւր «Տարեգրի» (Годический) մէջ: Բալց միւսն 1875 թւականիցն է որ ալդ Տարեգրի մէջ օղաբանական դիտողութիւնները խմբագրւում են բոլորովն համապատասխան ալն միջազգայն որոշումների, որ կալացան Օղաբանական կոնգրէսում Վիեննայում 1873 թ., իսկ մինչ 1875 թւականը

դիտողութիւնները և տարեգրի խմբագրութիւնը աշնպէս էր, որ զժամար էր համեմատութիւններ անել կովկասի օդաբանական երևութիւնների ու Ռուսիայի կամ Եւրոպայի նման երևութիւնների հետ: Ներկայ «Օրացոյցի» մէջ տրւում են տեղեկութիւններ կովկասի 32 կէտերի վերաբերմամբ, որոնցից ամեն մէկի համար 17 հարցերի պատասխանն է տրւում, աշն է 1) մթնոլորդի ճնշումը, 2) օդի ջերմութիւնը Ցելսիուսի ջերմաստիճանով, 3) համեմատական խոնավութիւնը, 4) միջին ամպոտութիւնը, 5) օճաք, 6) օճաքի օրերի թիւը, 7) ձիւնոտ օրերի թիւը, 8) կարկուտով օրերի թիւը, եթէ կարկուտը աշնքան մեծ է, որ կարող է վնասել գիւղատնտեսութեան, 9) կաթածակով օրերի թիւը, 10) պարզ օրերի թիւը, 11) թզուտ օրերի թիւը, 12) մեծ քամիներով օրերի թիւը, 13) օգերի թիւը, երբ ջերմաստիճանը 0°-ից ավելի չէ, 14) օրերի թիւը, երբ ջերմաստիճանը իջնէ 0°-ից, 15) որքան անգամ քամի է եղել և ինչ արագութեամբ 8 գլխաւոր կողմերի համար՝ հիւսիսային, հիւսիսարեւելեան, արեւելեան, հարաւարեւելեան, հարաւ, հարաւարեւմտեան, երեւմտեան և հիւսիսարեւմտեան:

Աշն կէտերը, որոնց վերաբերմամբ ընթերցողը կարող է ալդ հարցերի պատասխանները գտնել, սոքա են՝ Թիֆլիս, Մանգլիս, Գորի, Սուրամ, Բորժոմ, Արասթուման, Բէլը-Կիւլ (Աղբուլաղ), Բուքարիս, Փոթի, Բաթում, Շուշի, Գանձակ, Լենքորան, Բաքու, Արդահան, Երեւան, Էյսկի, Նովորոսիսկի, Սուխի, Խու-

տորսկ (Լուբանի ճառ), Պրիշիբ, Ստաւրապոլ, Թեմիր-խան-Շուրա, Պետրոպոլսկ, Վլադիկավազ, Պետրոպոլսկ, Վեդէն և Կարս:

Ռուսաստանի քաղաքները և գլխաւոր գիւղերը, ի բաց առած կովկասը (էջ 126—133) ալբանական կարգով դասաւորած. ալդ ցանկից իմանում ենք, որ, ի բաց առաց կովկասը, ռուսաց կասերութեան սահմաններում (թէ Եւրոպայում և թէ Ասիայում) քաղաքների և գլխաւոր գիւղերի թիւն է շուրջ 900. գիւղերից գլխաւոր համարած են միայն ճոքա, որոնք ունեն ավելագոյն 1000 հոգի բնակիչ, ի նկատի ունենալով որ մեր երկրում, կովկասում, ամենամեծ գիւղերը ունին ոչ շատ ավելի քան 5000 բնակիչ, եւ հաշվելի թէ Ռուսաստանի վերը լրջած սահմաններում որքան են ալդ գիւղ ու քաղաքները, որոնք ունեն 1 հազարից մինչ 5000 բնակիչ, և գտալ որ զոցա թիւն է 334:

Բնակչութեան գլխաւոր տեղերը կովկասում (էջ 161—200). Ալդտեղ ալբանական կարգով լրջած են կովկասի բոլոր քաղաքները և ալդ գիւղերը, որոնք 500 հոգուց ավելի բնակիչ ունեն. Դուրս է գալիս, որ ալդ կէտերի թիւն է, մեր հարեանցի հաշուով, մոտ. 3200, թէ հիւսիսային կովկասում և թէ Անդրկովկասում Ալդ թիւ մէջ 48-ը համարւում են քաղաքների, որոնցից ամենափոքրը Արդահան է 793, գլխաւորապէս հալ բնակիչներով, և ամենամեծը՝ Թիֆլիսն է, որի համար ցոյց է տրւած 145,731

բնակիչ (աղթ թիւը հիմնւած է ոստիկանական տեղեկութիւնների վերաւ 1891 թւակ. համար): Ներկորդ տեղը բռնում է Բաքուն՝ 103,000 բնակիչներով, նոյնպէս ոտոսկանական տեղեկութիւնների համաձայն:

Ա ղ ի կ ա ս ի ա յ ա բ ա ծ ու թ իւ լ ն եր, Մէջ ենք բերում համադրամար թւերը ըստ նահանգների:

Թ ի Ֆ լ ի ս ի ն ա հ ա ն գ իւր 9 գաւառներով, աչն է՝ Թիֆլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի, Գորաւի, Դուշէթի, Սղեմսի, Թելաւի և Թիֆլիսի—39,641,04 քառ. կիլոմետր (կամ 34,828,12 քառակ. վերստ, չը հաշւած Թիֆլիսի քաղաքի տարածութիւնը):

Ք ու լ ա չ ի ս ի ն ա հ ա ն գ (7 գաւառներով՝ Քուլթալի, Զուղդիդի, Լեյզոմի, Օղուրդէթի, Ռաչինի, Սենակի և Շորոպանի) և հետեւալ երեք օկրուգներով՝ 1) Սուխումի, Բաթումի, Արտւինի, 31,789 քառ. վերստ կամ, 36,176 քառ. կիլո:

Գ ա ն ձ ա կ ի ն ա հ ա ն գ (իւր 8 գաւառներով՝ Գանձակի, Արէշի, Զերբալիլի, Զեւանշիրի, Զանդեղուրի, Ղաղախի, Նուխալ և Շուշալ) 43,305,197 քառ. կիլ. կամ 38,053,173 քառ. վերստ:

Բ ա ք ա չ ն ա հ ա ն գ (իւր 6

գաւառներով՝ Բաքալ Դեօկալի, Զեւաթի, Ղուրալի, Լենքորանի և Շեմախու) 39,095,07 քառ. կիլ. կամ 34,353,13 քառ. վերստ:

Ն Ր Ե ա ն ի ն ա հ ա ն գ (իւր 7 գաւառներով՝ Ներանի, Ալէքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր-Բալազէդի, Սուրմալուի, Շարուր-Ղարալազեաղի և Էջմիածնի) 26,093,88 քառ. կիլ. կամ 22,929,03 ք. վերստ:

Դ ա ղ ս տ ա ն ի օ բ լ ա ս տ չ իւր 9 օկրուգներով 29,346,19 ք. կիլ. կամ 25,787,17 ք. վերստ:

Ղ ա Ր ս ի օ բ լ ա ս տ չ (իւր օկրուգներով՝ Ղարսի, Կաղզանի, Արդահանի, Օլթիի) 18,925,80 ք. կիլ. կամ 16,630,11 ք. վերստ:

Զ ա ք ա թ ա լ ի օ կր ու գ 3,993,89 քառ. կիլ. կամ 3,509,4 ք. վերստ:

Ը ն դ ա մ ն եր Անդրկովկասն ունի 236,577,98 քառ. կիլ. կամ 207,891,87 քառ. վերստ:

Հ ի ս տ ա յ ի ն Կովկասը (իւր նահանգներով՝ Ստաւրապոլի, Կուբանի և Տերեկի) 231,786,8 կամ 203,771,2 ք. վերստ:

Ա ղ գ ա բ ն ա կ ու թ իւ լ ն եր ըստ կրօնական զաւանանքների (էջ 23—29):

Ամբողջ Անդրկովկասում պաշտօնապէս ճանաչւած են՝ ուղղափառ (լուծադաւան) 1,481,066 հոգի արաիան և իգական. ռուս աղանդաւորներ՝ 57,105, հալ լուսաւորչական՝ 955,239, հալ կաթողիկոսներ՝ 30,676, Հռոմա-կաթողիկ՝ 12,445, Լութերական՝ 14,000 հոգի, հրէաներ՝ 37,066 հ., մահմեդական 1,544,137 սունիտներ և 805,746 շիաներ՝ եղիզներ՝ 11,449, միւս դա-

¹⁾ Նահանգ (губернія) կոչւում է ալեւարչական մեծ բաժանմունքը, ուր մտցրած են քաղաքացիական օրէնքները. աղբակիսի նահանգները բաժանւած են գաւառների (ուլեզդ). գաւառը կոչւում է օկրուգ (չրջան), եթէ կառավարութիւնը դեռ ևս զինւորական է:

անանքներ՝ 7.787 հոգի, ընդամենը՝ 4.958.721 հոգի:

Ազգաբնակչության ըստ ազգութիւնների, ըստ տեղեկութիւնների 1886—90 թ.

թուրքեր . . .	1.107.232
հայեր . . .	965.167
իմերեցիներ . .	419.967
վրացիներ . . .	400.437
մինգրէլներ . .	214.601
ուսուներ . . .	140.095
թաթեր . . .	124.633
քուրդեր . . .	97.499
օսեր . . .	76.130
գուրիացիներ .	74.171
տաճիկ . . .	75.863
աջարցիներ . .	59.495
լոչներ . . .	57.156
հրէաներ . . .	34.000

Միւս, անլի մանր, ազգութիւնները կամ ցեղերը առաջ չենք բերում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ միայն Անդրկովկասում (ուրեմի չը հաշված Հիւսիսային Կովկասը և միացեալ Ռուսաստանը) հայերի թիւը, պաշտօնական տեղեկութիւնների հիման վերաբ 1886—90 թականներում էր 965.167 հոգի: Սակայն եթէ աղբ թւի վերաբ անշուշտ լինենք բնական աճումը որ պէտք է տեղի ունեցած լինի այս վերջին տարիներում, կը գտնենք որ Անդրկովկասում հայերի թիւը ներկայումս մի միլիոնից դեռ մի փոքր էլ անլի է:

Նահանգներից Երևանեանը միակն է, ուր գերակշիռ թիւը հայերինն է. աղբ նահանգի ընդհանուր ազ-

գաբնակութիւնն էր 1890 թականին 701,320, որից մօտ 395.000 հայեր:

Աղբ նահանգի գաւառներից ամենապոտ հայկականն է Ալեքսանդրապոլի գաւառը, ապա Նոր-Բալազէդինը և Էջմիածնի գաւառը, նահանգի միւս (հարաւային) գաւառներում թուրքերը անլի են հայերից:

Երկրորդ հալաչատ նահանգն է Գանձակինը, ուր 728.000 բնակիչներից (1886 թ.) 258.000-ը հայեր էին: Աղբ նահանգի ամենահալաչատ գաւառը Շուշանն է, երկրորդը՝ Ջանգեղուրի գաւառն է, ուր հայերը անլի են քան թուրքերը:

Երրորդ հալաչատ նահանգն է Թիֆլիսինը, ուր 875.400 հոգի բնակիչներից հայերի թիւն է 156.000: Մնացեալ նահանգներում հայերի թիւը շատ պակաս է. Ղարսի օբլաստում 200.800 բնակիչներից 44.280 հայեր են, մօտ 47.000 տաճիկ, 30.260 քուրդ, 27.500 լոչ, 27.200 զարափափախ, շուրջ 12.000 ռուս և այլն:

Նկեղեցիների և վանքերի թիւը ցոյց է տրւած աղալն.

Ուղղափառ	1884
Հայ-լուսաւորչական . . .	1319
Հայ-կաթոլիկներ	61
Հրէաների սինագոգներ և ալ ազօթարաններ	71
Մկիչներ և ջամիւներ՝ սուանիներ	1978
Շիւաներ	1128
Ռուս աղանդաւորների ազօթարաններ	114

Ռուսաց պետական ուսումնարաններ Կովկասում

առևտրային պետական ուսումնարանները քաժանտում են հետևեալ կարգերի. զիննադիրներ տղալոց (8) և աղջիկներ (9), պրոդիմնադիրներ տղալոց (3) և աղջիկներ (7), ուսուցչական ուսումնարաններ տղալոց (8), ուսուցչական ինստիտուտ (1), ուսուցչական սեմինարիաներ (4), քաղաքային ուսումնարաններ (35), լեռնական ուսումնարաններ (5), արհեստագիտական ուսումնարաններ (7), ծովագնացական ուսումնարաններ (3) և 2 պլ ուսումնարաններ (Բաթումում և Ղարսում):

Աշակերտների թիւն է.

- 6 տղալոց զիննադ. 3292 (690 հ.)
3 տղալոց պրոդիմ. 620 (197 հ.)
8 ուսուցչական դպր. 2319 (584 հ.)

- 9 լիզակ. զիննադ. 3486 (611 հ.)
7 լիզակ. պրոդիմ. 1043 (224 հ.)
1 ուսուցչ. ինստ. 96 (6 հ.)
4 ուս. սեմինար. 277 (53 հ.)
35 քաղաք. ուսում. 6699 (2022 հ.)
5 լեռնակ. ուսում. 565 (27 հ.)
7 արհեստա. ուս. 591 (177 հ.)
3 ծովագն. կլաս. 105 (5 հ.)
1 Բաթումի դպր. 117 (14 հ.)
1 Ղարսի ուսում. 92 (3 հ.)

Սորանով և կը վերջացնենք մեր քաղաածքները ալս գրքից, որի մի միծ մասը կադմում է տնտեսական նկարագրութիւնը Կովկասի ըստնահանգների, բալց որից քաղաածքներ տալը մեզ շատ հեռու կը տանէր:

Ա.